ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 8.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի
09 մարտի 2016թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Կ .Հ. Հովսեփյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 10 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *Մանկավարժական պրակտիկաների ամփոփում:*
/զեկ. Ք.Վ. Օթարյան /
2. *Կուրսային և ավարտական աշխատանքների կատարման ընթացքի քննարկում:*
/զեկ. Ք.Վ. Օթարյան/
3. *I ընթացիկ քննությունների նախապատրաստում:*
/զեկ. Մ. Ա. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցներն անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց Ք. Վ. Օթարյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ ԻԿՄ III կուրսի 21 ուսանողներ հունվարի 27-ից փետրվարի 19-ը անցել են մանկավարժական պրակտիկա: Նա նշեց, որ բոլոր ուսանողներն էլ վարել են ակտիվ պրակտիկա և բարձր գնահատեց պրակտիկայի արդյունքները: Պրակտիկայի պաշտպանության ժամանակ ուսանողներից շատերը ներկայացրել են իրենց դասավանդման տեսահոլովակները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Վ. Ցուցուլյանը, Մ.Ա. Զաքարյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Բարձր գնահատել պրակտիկայի արդյունքները:

Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց Ք. Վ. Օթարյանը: Նա ներկայացրեց կուրսային աշխատանքների կատարման ընթացքը: Ուսանողների մեծ մասի կուրսային և ավարտական աշխատնաքները ընթացքի մեջ են, ուսանողները պարբերաբար հանդիպում են ղեկավարների հետ: Ուսանողները ապահովված են անհրաժեշտ գրականությամբ և տեխնիկական միջոցներով:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Հսկողության տակ պահել կուրսային և ավարտական աշխատանքների կատարման ընթացքը:

Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Վերջինս նվիրված էր 2015-2016 ուստարվա II կիսամյակի I ընթացիկ քննությունների անցկացմանը: I ընթացիկ քննությունների անցկացման ժամանակացույցը կազմված է եղել նախորոք: Այն բաժանվել է ուսանողներին: Այնուհետև կատարվել են ճշգրտումներ և վերջնական ձևով ներկայացվեց գիտխորհրդին: Առկա են հարցաշարերը բոլոր առարկաներից: Բացի այդ, Մ. Ա. Զաքարյանը առաջարկեց ուսանողներին ավելի ակտիվացնել զեկուցումները:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Հաստատել ընթացիկ քննությունների գրաֆիկը:

ՆԱԽԱԳԱՀ	Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Կ. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ